ԳԻՆԸ՝ 75 կ.

Գիկորայ Տիգրանով

ՍԱՍՈՒ

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՀՈՎ. ԵՎԱՐԵՐ

891.715
Տ-58

ՊԵՏՐԱՏ – ՅԵՐԵՎԱՆ

1934 թ

891.713
Տ-58

ՆԻԿՈԼԱՅ ՏԻԽՈՆՈՎ

ՍԱՄԻՆ

1

Սամին մի խելոք, լավ սահիբ[1]) ունի,
Բայց նա մտրակով ծեծում է, վառում.
Սամին մի խելոք, լավ սահիբ ունի,
Բայց նա Սամիին մարդ չի համարում։
Նա մի աչքով է նայում Սամիին, —
«Շնորհակալ եմ» — չի ասում գոնե.
Ածիլվելու ջուր տալիս է Սամին,
Սահիբի համար թամբում է պոնի[2])։
Յեթե մազաչափ սխալվի Սամին,
Սահիբը, ինչպես Վիշնուն[3]), հասնում է
Յեվ իր ճիպոտով հենց այդ նույն ժամին
Վոտներին զարկում ու ցավացնում է։
Սակայն խզուբ չեր, վոր Բեջապուրում
Սամիի հայրը արագավազ եր.
Վորդու վոտներն են հիմա սովորում
Հոր վոտների պես դես ու դեն վազել։

21 SEP 2013
5312

Այդ տարին չար եր, բարով չբացվեց,—
Կլորականջիկ, մկանուտ պոնուն՝
Մի մատակ սեվ ձի շատ ուժեղ խածեց.
Ցեվ գոռաց վոգին չար՝ թելեֆոնում։
Սահիբը մի որ շատ կանուխ զարթնեց,
Ուզեց լրագիր կարդալ այդ ժամին,
Գոնգը՝) այդ մասին շատ գոռոզ հայտնեց,
Բայց վոչ լրագիր յեկավ, վոչ Սամին։
Սահիբն ստիպված ուրիշին ասաց,
Վոր ածիվելու համար ջուր բերի,
Ցեվ,—ինչ վոր յերբեք դեռ չեր պատահած,—
Գարի չկերած՝ դուրս գնաց ջորին։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ ԴԱՐԱՆ
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ԱՄ. Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
59209.66

Յետ յեկավ Սամին յոթ որից հետո,
Ինչպես իր հոտից բաժանված այծիկ,
Յեկավ վիրավոր, արնոտած վոտով,
Ցնցոտիներով, նիհարած քաղցից։
Ուռած կոշտերի կապույտն եր հիմի
Փայլում, ինչպես մի վոսկի՝ իր նիշով։
Սահիբի մի աչքն եր տեսել Սամին,
Իսկ հիմա տեսավ յերկուսը խոժոռ։
— «Ո՞ւր եյիր կորել, դու, պոչատ կապիկ։ —
Ճոճվում եր Սահիբն ճոճաթոռի մեջ։
Պատասխան տվեց Սամին հանդարտիկ,
— Յես վախեցա քո ճիպոտից անվերջ,
Ուզեցի գնալ Մեծ իշխանի մոտ,
Մեծ քան բրամինը[5]) և ռաջան[6]) կյանքում,
Բայց մոլորվեցի ճամբին քարքարոտ,
Ինչպես կատվի կույր ձագը տանիքում։
— Դու ծնված ես միշտ մնալու հլու,
Ցելնելու կանուխ, ջուր տալու համար,
Վազելու պոստը, ախոռ սրբելու,
Քո տերը յես եմ, կապիկ դու հիմար։

— Ձյունների յետեվ, սանդուխի նման՝
Վորով կարծես թե մարդ յերկինք կելնի,
Ապրում է նա մեծ քաղաքում հիմա
Յեվ մարդիկ նրան կանչում են Լեննի։
Նա հաց է տալիս մարդկանց սովատանջ,
Նա նույնիսկ գայլին մարդ է դարձնում,
Նա մեծ սահիբ է յերկնքի առաջ,
Յերբեք մտրակով նա մարդ չի ծեծում։
Սամին սերում է ցեղից Մակրատա,
Բայց նրա համար ցեղը կը թողնի
Յեվ ածիվելու նրան ջուր կտա,
Պոսոը կվազի, կմաքրի պոնին։
Ու դրա համար կտա մեծ Լեննին
Այնքան ռուպիաներ՝), իմաստուն խորհուրդ,
Վոր դեռ չի տվել վոչ մեկը մեկին,—
Սամին կջնջի տերերին անգութ։

—Վերտեղ լսեցիր այդ, վողորմելի։
Քմծիծաղ տվեց Սամին խորամանկ.
—Այնտեղ, ուր վտանգ կա ճերմակներին,
Ամբոխ սարի խուլ կրպակների տակ։
Այնտեղ ամեն ինչ գիտեն առանձին,
Գիտեն սուդրայի[8]) մտքերը թագուն,
Գիտեն ինչ արժե Ռոխիլքենտում ձին,
Ցեվ ինչքան ե այդ Լենինի իմաստուն։
—Դե՛, կորի՛ր,— գոռաց տեր անգլիացին։
Հաղթանակ տարած հեռացավ Սամին,
Սահիբը ներսում փակվեց առանձին,
Դուրս չեկավ նույնիսկ երբ ճաշի ժամին։

Յեվ ծնկի յեկած, ու նիրհուն
Լուրջ ադոթում եր Սամին մտահոգ
Այն մեծ սահիբին, հեռավոր Լենինուն՝
Անհասկանալի ինչպես մի իոգ[9]),
Վոր Սամու փոքրիկ աղերսն եր լսում
Իր մեծ քաղաքում, Ե՛յ, վորին վոչ միշտ
Կարող ե հասնել թռչունը իր սուր
Թռիչքով, նույնիսկ փայլակից եվ խիստ.
Նա պիտի թրջվեր անձրեվից, անշուշտ,
Փիղը վազելուց՝ պայթեր տապագին,
Ու սահիբների կառքը հրաշունչ
Պիտի փշրվեր, ինչպես ապակին։

Այդքան հեռու յեր գտնվում Լեննին,
Բայց լսեց Սամու աղերսը մեկ-մեկ,
Վոր աղերսում եր արցունքն աչքերին,
Ծնկաչոք յեղած, մտատանջ ու հեգ,
Բայց վոտքի յելավ շատ թեթեվ ու ժիր,
Ասես հոդերը լավ յուղով ոծեց։
Իջնող յերեկոն սև դույլերով իր
Նրա վրան իր բարիքներն ածեց։
Կարծես նա նորից ծնվեց շատ թեթեվ,—
Այս անգամ արդեն մարդ ե պայքարող,
Ցեվ իրեն յերբեք ել այսուհետև
Ցեվ վոչ մի սահիբ զարկել չի կարող։

Թարգմ. Վ. ՆՈՐԵՆՑ.

22/12 — 33 թ.

ՀԽՍՀ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՍՍՌ-Արմ ՍՍՌ
Ս. ԱՍԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ
<< Ազգային գրադարան
NL0390694

5312

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սահիբ . . Տեր, պարոն
2. Պոնի . . Մի տեսակ փոքր ձի
3. Վիշնու . . Հնդկական աստվածություն
4. Գոնգ . . Մի տեսակ մեծաղյա զանգ
5. Բրամին . . Հոգեվորական
6. Ռաջա . . Իշխան, նողատեր
7. Ռուպիա . . Հնդկական դրամ
8. Սուդրա . . Ստորին խավ Հնդկաստանում
9. Իոգ . . . Հնդկական գիտնական, փիլիսոփա

Պատ. խմբագիր՝ Ա. Հայրյան Տեխ. խմբագիր՝ Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանավազյան՝ Պատ. 438 հրատարակչ. № 2904
գլավլիտ № 8473 (բ) տիրաժ 5000